Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 01

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<12>> հունվարի 2026թ. ք. Երևան

2026 թվականի հունվարի 12-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
Պ. Գալստյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Մ. Հովհաննիսյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Իրավաբանական վարչության նախարարության իրավական շահերի պաշտպանության բաժնի ավագ իրավաբան, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էր հանձնաժողով նախագահ Ա. Սիմոնյանը: Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

1.1 Քննարկվեց՝ «ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2025 թվականի դեկտեմբերի 25-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային

միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2026 թվականի դեկտեմբերի 25-ին լիազոր մարմին է ներկայացրել հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցներ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, համայնք Մարտունի, գյուղ Ներքին Գետաշեն, Ներքին Դուրան թաղամաս 7-րդ փողոց 69 գործունեության վայրում:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ տեխնիկական զննության կայանի տարածքների օգտագործման իրավունքի վկայականի պատճենը և հատակագիծը և տեխնիկական զննության անցկացման գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող ապրանքների, առարկաների, սարքավորումների ստուգաչափումների դրական եզրակացությունները և տեխնիկական բնութագրերը պարունակող անձնագրերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն և 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման: Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան